ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Արմավիրի մարզ, գ. Խանջյան հեռ. 6-92-96

Արմավիրի մարզպետ
Պարոն Ա. Ղահրամանյանին

Թիվ - 01-57

"24"դեկտեմբերի 2013թ.

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ներկայացվում է Խանջյան գյուղական համայնքի ավագնու „09" դեկտեմբերի 2013 թվականին կայացած N 7 նիստի որոշումները:

Առդիր 20. էջ:

Խանջյան համայնքի ղեկավար՝ Ս. Ավագյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 12841-13
26. 12 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ն 7 ՆԻՍՏԻ

„09" դեկտեմբերի 2013թ.
Գ. Խանջյան

# ՈՐՈՇՈՒՄ N 16

## *ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով, ավագանին որոշում է՝*

## *ՈՐՈՇՈՒՄ N 16*

1. *Հաստատել Խանջյան գյուղական համայնքի ավագանու "09" դեկտեմբերի 2013թվականին կայացած N 7 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

| Ավագանու անդամներ | Կողմ(ստ) | Դեմ(ստ) | Ձեռնպահ(ստ) |
|---|---|---|---|
| 1. Ավագյան Շանթ | [signature] | | |
| 2. Արոյան Ավետիք | [signature] | | |
| 3. Գենջոյան Աբրահամ | [signature] | | |
| 4. Եղիազարյան Արմեն | [signature] | | |
| 5. Թովմասյան Կամո | [signature] | | |
| 6. Խաչատրյան Հովհաննես | [signature] | | |
| 7. Միրզախանյան Երվանդ | [signature] | | |

*ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* [signature] *Ս. ԱՎԱԳՅԱՆ*

«09» Դեկտեմբերի 2013թ.
կայացած N 7 նիստի
Գ.Խանջյան

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.Օրակարգը հաստատելու մասին

Զեկուցող ------- Ս.Զաքարյան

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյան գյուղական համայնքի ավագանու 10 դեկտեմբերի 2012 թվականի թիվ 5 նիստի թիվ 4-Ն որոշման մեջ փոփխություն կատարելու մասին:

Զեկուցող ------- Լ. Ավետիսյան

3.Խանջյան գյուղական համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը 2014 թվականի համար հաստատելու մասին:

Զեկուցող ------- Ս. Ավագյան

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյան գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Զեկուցող ------- Ս. Ավագյան

5.Խանջյան գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և աշխատավարձի դրույքաչափերը հաստատելու մասին:

Զեկուցող ------- Ս. Ավագյան

6.Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերի օրինակելի կանոնադրությունը տեղեկացնելու և հաստատելու մասին:

Զեկուցող ---------- Ս.Զաքարյան

7.Գյուղապետարանի և ենթակա բյուջետային կառույցների աշխատակիցներին պարգևատրելու և խրախուսելու մասին:

Զեկուցող ------- Ս.Միրզախանյան

8.Գույքահարկի գեղչ կիրառելու մասին:

Զեկուցող ------- Ե.Եղիազարյան:

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Ավագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 7 ՆԻՍՏԻ

„09" դեկտեմբերի 2013թ.
Գ. Խանջյան

# ՈՐՈՇՈՒՄ N 17-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ԹԻՎ 4 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ավագանին որոշում է՝.

## ՈՐՈՇՈՒՄ 17-Ն

1. Բյուջեի 01-1-1 (բաժին-խումբ-դասի)
   1)4112 հոդվածից պակասեցնել 530,0 հազար դրամ:
   2)4212 հոդվածից պակասեցնել 473,0 հազար դրամ:
   3)4213 հոդվածից պակասեցնել 115,0 հազար դրամ:
   4)4215 հոդվածից պակասեցնել 50,0 հազար դրամ:
   5)4234 հոդվածից պակասեցնել 29,0 հազար դրամ:
   6)4241 հոդվածից պակասեցնել 40,0 հազար դրամ:
   4823 հոդվածից պակասեցնել 150,0 հազար դրամ:
   Ընդամենը պակասեցված 1387,0 հազար դրամը ավելացնել 01-1-1 (բաժին-խումբ դասի) 4111 հոդվածին:
2. Բյուջեի 05-1-1 (բաժին-խումբ-դասի)4213 հոդվածից 250,0 հազար դրամ պակասեցնել և 01-1-1 (բաժին –խումբ-դասի)4111 հոդվածին ավելացնել 250,0 հազար դրամ:
3. Բյուջեի 01-6-1 (բաժին –խումբ-դասի)4819 հոդվածից պակասեցնել 79,0 հազար դրամ:
   01-1-1 (բաժին –խումբ-դասի) 41 հոդվածին ավելացնել 79,0 հազար դրամ:
4. Բյուջեի 10-7-1 (բաժին-խումբ-դասի) 4819 հոդվածը պակասեցնել 300,0 հազար դրամ:

5. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:*

| Ավագանու անդամներ | Կողմ(ստ) | Դեմ(ստ) | Ձեռնպահ(ստ) |
| --- | --- | --- | --- |
| 1. Ավագյան Շանթ | | | |
| 2. Արոյան Ավետիք | | | |
| 3. Գենջոյան Աբրահամ | | | |
| 4. Եղիազարյան Արմեն | | | |
| 5. Թովմասյան Կամո | | | |
| 6. Խաչատրյան Հովհաննես | | | |
| 7. Միրզախանյան Երվանդ | | | |

*ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ԱՎԱԳՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 7 ՆԻՍՏԻ

*09" դեկտեմբերի 2013թ.*

*գ. Խանջյան*

# ՈՐՈՇՈՒՄ N 18

## ԽԱՆՋՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով հիմք ընդունելով "Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ հոդվածները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում է.*

## ՈՐՈՇՈՒՄ N 18

1. Հաստատել տեղական տուրքերի դրույքաչափերը 2014 թվականի համար

1)Մինչև 300 քմ ընդհանուր մակերեսով անհատական բնակելի և այգեգործական կառույցների, մինչև 200քմ ընդհանուր մակերեսով հասարակական և արտադրական նշանակության կառույցների թույլտվության համար սահմանել 5000 դրամ:

2)Մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող այլ օրենքների շինության համար թույլատվությունը 3000 դրամ, 20քմ-ից ավելի ընդհանուր մակերես ունեցող այլ օբյեկտների շինարարության թույլատվության համար սահմանել 5000 դրամ:

3)Կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդհանուր (այդ թվում ստորգետնյա), նպատակային նշանակությունը փոխող շինարարական աշխատանքների թույտվության համար սահմանել 3000 դրամ:

4.)Հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում ոգելից խմիչքների վաճառքի թույլատվության համար սահմանել 2000 դրամ յուրաքանչյուր եռամսյակի համար:

5)Հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում ծխախոտի արտադրանքի վաճառքի համար սահմանել 2000 դրամ յուրաքանչյուր եռամսյակի համար:

2. Հաստատել տեղական վճարների դրույքաչափերը 2014 թվականի համար

1)Տեղական մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցում՝ մասնակիցներից 2000 դրամ:

2)Ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու, արխիվային նյութերի պատճենների և կրկնօրինակների տրամադրելու, հողահատկացումների և անհաժեշտ չափագրական աշխատանքների համար սահմանել տվյալ գործողություններն իրականացնելու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափով վճար

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

| Ավագանու անդամներ | Կողմ (ստ) | Դեմ(ստ) | Ձեռնպահ(ստ) |
|---|---|---|---|
| Ավագյան Շանթ | | | |
| Արոյան Ավետիք | | | |
| Գենջոյան Աբրահամ | | | |
| Եղիազարյան Արմեն | | | |
| Թովմասյան Կամո | | | |
| Խաչատրյան Հովհաննես | | | |
| Միրզախանյան Երվանդ | | | |

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

« 9»նոյեմբերի 2013թ. թիվ 19 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյան համայնքի 2014 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 35076.1 հազար դրամ, ծախսերի գծով՝ 35076,1 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի / պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50 տոկոսը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Ավագյան Շանթ
2.Արոյան Ավետիք
3.Գենջոյան Աբրահամ
4.Եղիզարյան Արմեն
5.Թովմասյան Կամո
6.Խաչատրյան Հովհաննես
7.Միրզախանյան Երվանդ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՎԱԳՅԱՆ

2013 թվականի նոյեմբերի 9

գ. Խանջյան

## ՈՒՂԵՐՁ

## ԽԱՆՋՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 Թ. ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և « Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով Ձեր քննարկմանն է ներկայացվում Խանջյանի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն:

Խանջյանի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն կազմվել է համայնքի ղեկավարի քառամյա ծրագրի դրույթներին համապատասխան:

<u>ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</u>

**Խանջյանի գյուղական համայնքի 2014թ. բյուջեով կանխատեսվել են եկամուտներ՝ Ընդամենը 35076,1 հազար դրամ;**

Խանջյանի գյուղական համայնքի 2014թ. բյուջեով սեփական եկամուտները կանխատեսվել է 12070,0 հազար դրամ:

Պետական բյուջեից տրվող դոտացիան՝ 23006,1 հազար դրամ:

2014թվականին հարկերի գծով նախատեսվել է 11620.0հազար դրամ, որից 8700.0հազար դրամ հողի հարկ և 2200.0 հազար դրամ փոխադրամիջոցների գույքահարկ, Շ/շինության գույքահարկ 720.0 հազար դրամ: Կանխատեսման համար հիմք է հանդիսացել գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և գանձման հաշվարկները:

Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքեր նախատեսվել է

100.0 հազար դրամ:

Պաշտոնական դրամաշնորհների գծով՝ դոտացիա 23006,1 հազար դրամ՝ հիմք «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը:

Այլ եկամուտների գծով նախատեսվել է 350.0 հազար դրամ:

Եկամուտները ըստ եկամտատեսակների՝ կից հատված 1-ին համապատասխան՝ կից տեղեկություններ: Նախորդ 2012 թվականի փաստացի կատարված, 2013 թվականի հաստատված և 2014 թվականի նախատեսված եկամուտների համեմատականը կցվում է (համեմատական 1):

**ԾԱԽՍԵՐ**

**Խանջյանի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեով ծախսերը նախատեսվել են՝ Ընդամենը 35076,1 հազար դրամ,**

այդ թվում՝

Ընթացիկ ծախսերի գծով՝ 33346,1 հազար դրամ,իսկ կապիտալ ծախսերի համար 1730.0 հազար դրամ:

Խանջյանի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեով նախատեսված ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում են (հատված 2,3,6):

Համայնքի 2014 թվականի բյուջեի ծախսերը հաշվարկելիս առաջնորդվել ենք 2012-2013թ,թ բյուջեի փաստացի կատարված և 2014թ. սպասվելիք ծախսերով:

ԾԱԽՍԵՐԸ ԲԱՇԽՎԵԼ ԵՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 01 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 23418,1 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

01բաժին 1 խումբ 1 դաս ` «Օրենսդիր և գործադիր մարմիններ» ծրագրով նախատեսվել է 23068,1 հազար դրամ ,որից 22068,1 հազար դրամ ընթացիկ ծախս, 1000.0 հազար դրամ՝կապիտալ ծախս:

01բաժին 3 խումբ 3 դաս՝ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 150.0 հազար դրամ՝ համակարգչային ծառայությունների համար:

01բաժին 6 խումբ 1 դաս՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) » ծրագրով նախատեսվել է 200.0 հազար դրամ կապիտալ ծախս:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 04 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 2000.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

04 բաժին 5 խումբ 1 դաս՝ « ճանապարհային տրանսպորտ» ծրագրով 2000.0հազար դրամ ընթացիկ ծախս՝ճանապարհների ընթացիկ վերանորոգման աշխատանքների համար :

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 05 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 1000.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

05 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Աղբահանում» ծրագրով 1000.0 հազար դրամ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 06 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 500.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

06բաժին 3 խումբ 1 դաս՝ «Ջրամատակարարում» ծրագրով նախատեսվել է 500,0 հազար դրամ կապիտալ ծախս՝ խմելաջրի ցանցի վերանորոգման համար:

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 08 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 4125,5 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

08 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Հանգստի և սպորտի ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 500.0 հազար դրամ ընթացիկ ծախս:

08 բաժին 2 խումբ 1 դաս՝ «Գրադարաններ » ծրագրով նախատեսվել է 804,0 հազար դրամ , որից 774.0 հազար դրամ ընթացիկ ծախս, իսկ 30.0 հազար դրամ կապիտալ ծախս:

08 բաժին 2 խումբ 3 դաս՝ «Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ» ծրագրով նախատեսվել է 2321.5 հազար դրամ:

08 բաժին 2 խումբ 4 դաս՝ «Այլ մշակութային հիմնարկներ» ծրագրով 500.0 հազար դրամ: Այս ծրագրում ընդգրկվել են համայնքային նշանակության միջոցառումների գծով ծախսերը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 09 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 774.00 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

09բաժին 1 խումբ 1 դաս՝ «Նախադպրոցական կրթություն » ծրագրով 774.0 հազար դրամ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 10 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 2300.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

10 բաժին 7 խումբ 1 դաս՝ « Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրով նախատեսվել է 2300.0 հազար դրամ: Այս ծրագրում ընդգրկվել են թաղման ծախսերի մասնակի հատուցման համար , սոցիալապես անապահով խավերին մասնակի օգնության , կազմակերպություններին աջակցության և նվիրատվության համար ծախսերը:

Օգնությունները տրվում են տարին մեկ անգամ ՝ համայնքի ղեկավարի որոշմամբ՝ քաղաքացիների դիմումների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ 11 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 2688.5.0ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

11 բաժին 1 խումբ 2 դաս՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» 2688.5 հազար դրամ, որից 1730.0 ուղղվել է ֆոնդային բյուջե՝ կապիտալ ծախսեր կատարելու համար:

Նախորդ 2012թվականի փաստացի կատարված, 2013թվականի հաստատված և 2014 թվականի նախատեսված ծախսերի՝ գործառնական և տնտեսագիտական դասակարգման, դեֆիցիտի, մարման աղբյուրների , առանձին ցուցանիշների համեմատականները կցվում են ( համեմատական 2,3,4,5,6):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 7 ՆԻՍՏԻ

*„09" դեկտեմբերի 2013թ.*
*Գ. Խանջյան*

## ՈՐՈՇՈՒՄ N 20

### ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ և 26-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին որոշում է.

## ՈՐՈՇՈՒՄ N 20

1. Հաստատել Խանջյան գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ենթակայության կազմակերպությունների թվաքանակը, հաստիքացուցակը և աշխատավարձի դրույքաչափը՝ համաձայն հավելվածի:

| Ավագանու անդամներ | Կողմ (ստ) | Դեմ(ստ) | Ձեռնպահ(ստ) |
|---|---|---|---|
| Ավագյան Շանթ | | | |
| Արոյան Ավետիք | | | |
| Գենջոյան Աբրահամ | | | |
| Եղիազարյան Արմեն | | | |
| Թովմասյան Կամո | | | |
| Խաչատրյան Հովհաննես | | | |
| Միրզախանյան Երվանդ | | | |

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՎԱԳՅԱՆ

Հավելված
Խանջյան համայնքի
ավագանու "09"դեկտեմբերի 2013թ.
կայացած N 7 նիստի N 20 որոշման

2014 թվականի Խանջյանի գյուղապետարանի աշխատակիցների
թվաքանակը, հաստիկցուցակը և պաշտոնային
դրույքաչափերը՝

1. Աշխատակիցների թվաքանակը__ 13:

2. Աշխատակազմի հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնի դրույքը |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 205800 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 126000 |
| | Ընդամենը | 2 | 331800 |

Աշխատակազմ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 132300 |
| 2 | Գլխավոր մասնագետ | 2 | 99200 |
| 3 | Առաջատար մասնագետ | 3 | 86000 |
| 4 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 82500 |
| 5 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 72600 |
| | Ընդամենը | 9 | 826300 |

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Գործավար | 1 | 66100 |
| 2 | Հավաքարար | 1 | 59524 |
| | Ընդամենը | 2 | 125624 |

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՎԱԳՅԱՆ

2014 թվականի Խանջյանի գյուղական համայնքի գրադարանի աշխատակիցներիթվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

1. Աշխատակիցների թվաքանակը -1 :
2. Աշխատակազմի հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը:

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնի դրույք (դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Գրադարանի վարիչ | 1 | 59524 |
| | Ընդամենը | 1 | 59524 |

2014 թվականի Խանջյան գյուղական համայնքի կուլտուրայի տան աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

1.Աշխատակիցների թվաքանակը - :
2.Աշխատակազմի հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը:

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնի դրույք (դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Կուլտուրայի տան վարիչ | 1 | 59524 |
| 2 | Հավաքարար | 1 | 59524 |
| 3 | Պահակ | 1 | 59524 |
| | Ընդամենը | 3 | 178572 |

2014 թվականի Խանջյան գյուղական համայնքի մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

1.Աշխատակիցների թվաքանակը -1 :
2.Աշխատակազմի հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը:

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնի դրույք (դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Մանկապարտեզի վարիչ | 0,5 | 59524 |
| | Ընդամենը | 0,5 | 59524 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օր:

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ N 7 ՆԻՍՏԻ

*„09" դեկտեմբերի 2013թ.*
*Գ. Խանջյան*

# ՈՐՈՇՈՒՄ N 21

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՅՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի, 3-րդ մասով, ի կատարումն տարածքային կառավարման նախարարի «01»մարտի 2013թվականի N 01/16/915-13 հանձնարարականի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին որոշում է.

## ՈՐՈՇՈՒՄ N 21

1. Հաստատել Խանջյան համայնքի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշում ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

| Ավագանու անդամներ | Կողմ (ստ) | Դեմ(ստ) | Ձեռնպահ(ստ) |
|---|---|---|---|
| Ավագյան Շանթ | | | |
| Արոյան Ավետիք | | | |
| Գենջոյան Աբրահամ | | | |
| Եղիազարյան Արմեն | | | |
| Թովմասյան Կամո | | | |
| Խաչատրյան Հովհաննես | | | |
| Միրզախանյան Երվանդ | | | |

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ N 7 ՆԻՍՏԻ

„09" դեկտեմբերի 2013թ.
Գ. Խանջյան

# ՈՐՈՇՈՒՄ N 22

## ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԵՎ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2 ենթակետով, հիմք ընդունելով "համայնքային ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի Բ ենթակետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին որոշում է.

# ՈՐՈՇՈՒՄ N 22

1. Խանջյան գյուղական համայնքի գյուղապետարանի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին աշխատանքային պարտականությունները գերազանց կատարելու համար թույլատրել հատկացնելու 970,0 հազար դրամ միանվագ դրամական պարգևատրում որպես խրախուսանք տալու համար:
2. Սույն որոշում ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | Կողմ (ստ) | Դեմ(ստ) | Ձեռնպահ(ստ) |
|---|---|---|---|
| Ավագյան Շանթ | [signature] | | |
| Արոյան Ավետիք | [signature] | | |
| Գենջոյան Աբրահամ | [signature] | | |
| Եղիազարյան Արմեն | [signature] | | |
| Թովմասյան Կամո | [signature] | | |
| Խաչատրյան Հովհաննես | [signature] | | |
| Միրզախանյան Երվանդ | [signature] | | |

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Ս. ԱՎԱԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԽԱՆՋՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՀՀ Արմավիրի մարզ, գ. Խանջյան հեռ. 6-92-96

## ՈՐՈՇՈՒՄ N 23

«09» Դեկտեմբերի 2013թ.

Գ.Խանջյան

## *ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԵՂՉ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով " Գույքահարկի մասին" օրենքի 15-րդ հոդվածով, հիմք ընդունելով ներկայացված դիմումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը*

Ավագանին որոշում է

ՈՐՈՇՈՒՄ N 23

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրենց անձնական օգտագործման մեքենաները որոշ համայնքային ծառայողները, բուժական տեղամասի բժիշկը հաճախ օգտագործում են ծառայողական պարտականությունները կատարելու համար,նրանց նկատմամբ կրառել գույքահարկի զեղչ համաձայն հավելվածի

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | կողմ(ստ.) | Դեմ(ստ.) | Ձեռնպահ(ստ) |
|---|---|---|---|
| 1.Ավագյան Շանթ | | | |
| 2.Արոյան Ավետիք | | | |
| 3.Գենջոյան Աբրահամ | | | |
| 4.Եղիազարյան Արմեն | | | |
| 5.Թովմասյնա Կամո | | | |
| 6.Խաչատրյան Հովհաննես | | | |
| 7.Միրզախանյան Երվանդ | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս.Ավագյան